

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.04.2016
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:

(Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան):

2. Նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում:

(Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան):

ԼՄԵՅԻՆ՝ Վ. Ալեքսանյանը ամփոփեց 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարածայնություններ չեն եղել:

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.47 և 6.30 միավոր:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 1.97 և 5.30 միավոր:

Հոգեբանություն մասնագիտության 1-ին կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.15 և 4.69 միավոր:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.97 և 6.58 միավոր:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.59 և 6.09 միավոր:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.23 և 5.94 միավոր:

2015-2016 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.41 և 5.93 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- *2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:*

ԼՄԵՑԻՆ՝ Վ. Ալեքսանյանը օրակարգի երկրորդ կետի վերաբերյալ մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Նա նշեց, որ նախապաշտպանությունների արդյունքում որոշ աշխատանքների կատարման ընթացքում ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ, որոնք հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են նկատված թերությունները:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 24 ուսանող, իսկ ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 9 ուսանող: Վերջիններս գրում են Արտասահմանյան գրականություն առարկայի գծով: Ըստ նրա հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 25 ուսանող, որից 12-ը՝ Հայոց լեզվից, 13-ը՝ Հայ գրականությունից:

Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 50%-ը: Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունից ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն էքսպերիմենտալ բնույթ: Ավարտական աշխատանք է գրում 8 ուսանող: Ուսանողների մեծագույն մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 23 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական օգնության աշխատանք:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Սարհատյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2015-16 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. Խաչատրյան